ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՀԻՆՅԱՆ

Կյանքից հեռացավ հայ ճարտարապետության պատմության հայտնի մասնագետ, արվեստի վաստակավոր գործիչ, ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի վարիչ, ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր, Ալեքսանդր Արամի Սահինյանը։

Ա. Սահինյանը ծնվել է 1910 թ. Լոռիի Վարդարլուր գյուղում։ 1937 թ. ավարտելով Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժինը, աշխատանքի է անցնում Հայպետնախագծում, իսկ 1942 թ. մեկնում է ռազմաճակատ. մասնակցելով Հյուսիսային Կովկասի համար մղվող մարտերին. վիրավորվում է ու վերադառնում Երևան։ 1944 թ. ընդունվում է ԳԱ ասպիրանտուրան, որը ավարտելուց հետո 1952 թ. պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա «Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը» թեմայով։ 1946 թ. աշխատանքի է անցնում ԳԱ արվեստի սեկտորում, իսկ 1958 թ., երբ սեկտորը վերափոխվում է արվեստի ինստիտուտի, Ա. Սահինյանը ստանձնում է ճարտարապետության բաժնի վարիչի պաշտոնը։

1944 թ. Ապարանի շրջկենտրոնի Քասաղի բազիլիկայի պեղումները սկսելու օրվանից մինչև իր կյանքի վերջը Ա. Սահինյանը նվիրվել է հայ հին ճարտարապետության ուսումնասիրության գործին։ Երկու բնագավառ Ա. Սահինյանը մշակել է զարմանալի հարատևությամբ. Հայաստանի վաղ քրիստոնեական բազիլիկաները և Հայաստանի նախաքրիստոնեական ճարտարապետությունը։

Հայտնի է, որ վաղ քրիստոնեական պաշտամունքային ամենատարածված ձևը Հայաստանում բազիլիկային կառուցվածքն է։ Ն. Մառը առաջիններից էր, որ առաջ քաշեց Հայաստանի բազիլիկաների ասորական ծագումը՝ նրանց գոյությունը կապելով նոր կրոնի՝ քրիստոնեության Ասորիքից ներթափանցելու հանգամանքի հետ։

Քասաղում, Էջմիածնում, Խոնարհ վանքում (Գառնի) և Զովունիում (Ապարանի շրջան) կատարված պեղումների արդյունքների ու տվյալ հուշարձանների շինարարական վերլուծության հիման վրա որոշվող Հայաստանի բազիլիկանե-

ր ի կազմավորման ու հետագա զարգացման ընթացքը թույլ տվեց Ա. Սահինյանին վեր հանել նրանց մեջ տեղականը, տարբերելով այն հավելյալ ասորականից։ Էջմիածնում պեղումներ կատարելիս Ա. Սահինյանը պարզեց մայր տաճարի բազիլիկային բնույթը (նախ՝ միանավ, ապա՝ եռանավ), որի զարգացման առանձնահատկությունն է կազմել բազիլիկայի վերականգնումը։ Վերափոխումը խաչաձև կենտրոնագմբեթ շենքի 480 թ., Վահան Մամիկոնյանի օրոք՝ կատարվող եկեղեցու վերանորոգման ժամանակ։ Լուրջ արդյունքների հասավ Ա. Սահինյանը նախ կենտրոնագմբեթ մի այնպիսի դասական հուշարձան ուսումնասիրելիս, ինչպիսին Հռիփսիմեն է։ Տաճարի հիմքերը բացելիս նա գտավ վանքի մերձակայքում կամ գուցե և նրա տեղում երբեմնի կանգնած անտիկ կառույցի, ըստ երևույթին տաճարի մշակված մանրամասներ։

Վաղ քրիստոնեական բազիլիկաների նախնական ձևերի բացահայտումը, բազիլիկաներում համաչափությունների մոդուլային համակարգի

գոյությունը և, վերջապես, վաղ միջնադարյան պատմիչների (Զենոբ Գլակ, Փավստոս Բուզանդ) տվյալները Ա. Սահինյանին պետք է մոտեցնեին և իսկապես մոտեցրին երկրորդ պրոբլեմին՝ վաղ քրիստոնեական ճարտարապետության ակունքներին, այսինքն՝ Հայաստանի անտիկ դարաշրջանի ճարտարապետությանը։ 1949 թվականին գալով Գառնի որպես արշավախմբի ճարտարապետ, նա լայն ասպարեզ գտավ իր գիտական հետաքրքրասիրությունների համար։ Գառնի ամրոցի պարիսպը, հեթանոսական տաճարը, Արշակունիների պալատական համալիրը անտիկ բաղնիքով նրա ուսումնասիրությունների առարկան դարձան։ Երկու հարց առանձնացան իրենց կարևորությամբ։ Մեկը մ. թ. առաջին դարերի ճարտարապետության դերն էր վաղ քրիստոնեական թաղակապ կառույցների առաջացման գործում։ Պարզ էր դառնում, որ Գառնի ամրոցը հայ անտիկ ճարտարապետության այն փորձադաշտերից էր, որտեղ հաջողությամբ փորձարկվում էին թաղակապ քարե ծածկերը (տաճար, պալատի ընդունասրահ, բաղնիք)։ Մյուս հարցը հեթանոսական տաճարի ավերակների մանրակրկիտ ուսումնասիրումն էր՝ հանգուցային նշանակություն ունեցող մանրամասների հայտնաբերումով, որից հղացավ տաճարի վերականգնման գաղափարը, որը և իրագործվեց պետական լայն օժանդակության պայմաններում։

Ա. Սահինյանի գիտական ժառանգությունը հարստացնում է մեր մշակույթի պատմությունը արժեքավոր ուսումնասիրություններով։ Նրա «Քաղաղի բազիլիկայի ճարտարապետությունը», «Հայաստանի անտիկ ու վաղ միջնադարյան ժամանակաշրջանի ճարտարապետություն» գլուխները «Հայ ճարտարապետության ակնարկներում», «Գառնի—Գեղարդը», ՀՍՍՀ ԳԱ գիտական հանդեսներում տպված բազմաթիվ հոդվածները, տպագրության հանձնված «Գառնի ամրոցի անտիկ շրջանի ճարտարապետության կառույցները» և տպագրության պատրաստած «Էջմիածին» աշխատություններն իրենց պատվավոր տեղն են գրավում հայ ճարտարապետության ուսումնասիրմանը նվիրված գործերի շարքում։

Գ. Ա. ՏԻՐԱՅՅԱՆ